



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1092-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անձը, ով առանց օրենքով, այլ իրավական ակտերով կամ գործարքով սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին հարստացել է, որի արդյունքում տուժողը հայտնվել է պակաս շահեկան վիճակում, պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն հարստացումը, բացառությամբ սույն օրենսգրքի 1099-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

2. Սույն հոդվածի իմաստով՝

1) հարստացում է անձի գույքի ավելացումը, պարտավորությունների նվազումը, այլ անձի գույքի օգտագործումը, ծառայություններ կամ աշխատանք ստանալը կամ այլ համանման դեպքերը:

2) պակաս շահեկան վիճակ է գույքի նվազումը, պարտավորությունների աճը, ծառայություններ մատուցելը, աշխատանքներ կատարելը կամ այլ համանման դեպքերը:

3. Սույն գլխի կանոնները կիրառվում են այն դեպքում, երբ անհնարին է անհիմն հարստացումն այլ եղանակներով վերադարձնելը:

4. Սույն գլխի կանոնները կիրառվում են անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետևանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:»:



Հոդված 2. Օրենսգրքի 1094-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1094. Փոխանցելի հարստացում

1. Եթե հարստացումը ներառում է գույք, որը հնարավոր է վերադարձնել բնեղենով, ապա անհիմն հարստացած անձը վերադարձնում է հարստացումը՝ գույքը փոխանցելով պակաս շահեկան վիճակում հայտնված անձին (տուժողին):

2. Անհիմն հարստացած անձը կարող է գույքը փոխանցելու փոխարեն տուժողին վճարել դրա արժեքը, եթե գույքը վերադարձնելը ոչ խելամիտ ջանքեր կամ անհամաչափ ծախսեր կառաջացնի հարստացած անձի համար:

3. Անհիմն հարստացողը տուժողի առջև պատասխանատվություն է կրում անհիմն հարստացման յուրաքանչյուր դեպքի, այդ թվում նաև՝ պատահական կորստի և պակասորդի կամ վատթարացման համար, այն բանից հետո, երբ նա իմացել է կամ պետք է իմանար իր հարստացման անհիմն լինելու մասին:»:

Հոդված 3. Օրենսգրքի 1095-րդ հոդված շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1095. Զփոխանցվող հարստացում

1. Եթե հարստացումը չի կարող վերադարձվել տուժողին բնեղենով, ապա հարստացած անձը վերադարձնում է հարստացումը՝ տուժողին վճարելով դրա դրամական արժեքը:

2. Հարստացած անձը պարտավոր չէ հարստացման արժեքից ավելի մեծ գումար վճարել տուժողին, եթե գործել է բարեխղճորեն:»:

Հոդված 4. Օրենսգրքի 1097-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.



«1. Անձը, ով անհիմն հարստացել է, պարտավոր է տուժողին հատուցել կամ վերադարձնել այն բոլոր եկամուտները, որոնք նա ստացել է կամ կարող էր ստանալ այդ հարստացումից՝ սկսած այն օրվանից, երբ իմացել է կամ պետք է իմանար հարստացման անհիմն լինելու մասին:»:

Հոդված 5. Օրենսգրքի 1098-րդ հոդվածում «ձեռք բերող» բառերը փոխարինել «հարստացող» բառով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա ներքին հակասությունները և բացերը լրացնելու, օրենսգիրքը զարգացած իրավական փորձ ունեցող երկրների օրենսդրությունը համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ (Գերմանիա, Մոլդովա, Եվրոպական մասնավոր իրավունքի մոդելային կանոնները (DCFR)):

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունների կանոնակարգումների մեջ առկա են հետևյալ հիմնական խնդիրները.

- ✓ Պարտավորության օբյեկտների մասով օրենսդրությունը միատեսակ մոտեցում չի ցուցաբերում:
- ✓ Պարտավորության բովանդակության մասով տարանջատված չեն անհատապես որոշվող և տեսականիշով որոշվող իրերի վերադարձման պարտավորության առանձնահատկությունները:
- ✓ Անհիմն հարստացման կամ խնայման առարկա գույքի պատահական կորստի, պակասորդի կամ վատթարացման համար բարեխիղճ ձեռքերողի գույքային պատասխանատվություն է սահմանվում մինչև հարստացման անհիմն լինելու մասին իմանալը:



ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092-րդ հոդվածի համաձայն՝ անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունների օբյեկտ է հանդիսանում գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները: Համաձայն քննարկվող հոդվածի՝ քաղաքացիական իրավունքի մյուս օբյեկտները այս պարտավորության օբյեկտ չեն կարող հանդիսանալ, քանի որ գույքի կազմի մեջ չեն մտնում: Անհիմն հարստացում կարող է լինել նաև աշխատանքը կամ ծառայությունը: Սակայն, ինչպես երևում է վերոնշյալ նորմից անհիմն հարստացման սահմանման մեջ նշվում է միայն «գույք» բառը, իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը «գույք» հասկացության մեջ «աշխատանքները և ծառայությունները» չի ներառում:

Միաժամանակ, անհիմն հարստացման իրավակարգավորումները առանձին դեպքում օգտագործում են նաև «ծառայություններ» հասկացությունը, մասնավորապես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1095-րդ հոդվածի 2-րդ մաս: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1095-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը, ով ժամանակավորապես անհիմն օգտվել է ուրիշի ծառայություններից, պետք է տուժողին վերադարձնի այն, ինչը խնայել է՝ այն վայրում գոյություն ունեցող գնով, որտեղ դա կատարվել է: Այսպիսով՝ նշվածից պարզ է դառնում, որ ներկա իրավակարգավորման մեջ առկա է ներքին հակասություն օբյեկտների տեսակների մասով, իսկ աշխատանքների մասով համապատասխան կանոնակարգումները բացակայում են:

Ավելին անհիմն հարստացումն իր էությամբ հանդիսանում է լրացուցիչ ինստիտուտ, որն ուղղված է լրացնելու քաղաքացիական հարաբերությունները կանոնակարգող ինստիտուտների բացը (վինդիկացիոն հայց, միակողմանի գործողություններից բխող պարտավորություններ և այլն), հետևաբար խնդրահարույց է նաև քաղաքացիական իրավունքի մյուս օբյեկտները ևս անհիմն հարստացման պարտավորության օբյեկտ չդիտարկելը: Անհիմն հարստացումն իրավական համակարգերից շատերում սուբսիդար պահանջ է, այսինքն



գերակայում են պայմանագրի կամ դելիկտի հիմքով ներկայացվող պահանջները: Այսինքն, անհիմն հարստացումը, որպես ածանցյալ ինստիտուտ, կիրառվում է, երբ հնարավոր չէ կիրառել քաղաքացիաիրավական մյուս ինստիտուտները:

3. Կարգավորման նպատակը և բնույթը

Նախագծով նորովի է սահմանվել մի շարք տերմիններ՝ «հարստացում», «պակաս շահեկան վիճակ», որը հնարավորություն է տալիս համապարփակ ձևակերպել անհիմն հարստացման սահմանումը՝ տարածելով քաղաքացիական իրավունքի բոլոր հնարավոր օբյեկտների վրա: Նոր տերմինների ներդրմամբ պայմանավորված խմբագրվել են նաև մի շարք հոդվածներ (<< քաղաքացիական օրենսգրքի 1097-րդ, 1098-րդ հոդվածներ):

Հաշվի առնելով անհիմն հարստացման ինստիտուտի սուբսիդար բնույթը՝ այս մոտեցումն իր ամրագրումն է գտել նախագծում, մասնավորապես << քաղաքացիական օրենսգրքի նոր խմբագրությամբ շարադրվող 1092-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանվել է, որ անհիմն հարստացման իրավական նորմերը կիրառվում են այն դեպքում, երբ անհնարին է անհիմն հարստացումն այլ եղանակներով վերադարձնելը:

Հաշվի առնելով՝ անհատապես որոշվող և տեսականիշով որոշվող իրերի վերադարձման պարտավորության առանձնահատկությունները՝ նախագծում հստակեցվել են փոխանցելի և չփոխանցվող հարստացման կարգավորումները: Նախագծում նոր խմբագրությամբ շարադրվող 1094-րդ, 1095-րդ հոդվածների համաձայն՝ անհատապես որոշվող իրերը վերադարձվում են բնեղենով, բացառությամբ օրենքով նախատեսված առանձին դեպքերի, իսկ տեսականիշով որոշվող իրերի դեպքում, որոնք հնարավոր չէ բնեղենով վերադարձնել, հարստացած անձը վճարում է դրա դրամական արժեքը:



4. Իրավական ակտի կիրարկման դեպքում ակնկալվող արդյունքը

Սույն օրենքի նախագծի ընդունման արդյունքում անհիմն հարստացման ինստիտուտը կգործի որպես ածանցյալ ինստիտուտ, այն հնարավոր կլինի կիրառել քաղաքացիական իրավունքի բոլոր հնարավոր օբյեկտների վրա: Այս նոր իրավակարգավորումները հնարավորություն կտան անհիմն հարստացման ինստիտուտը կիրառել առավել համապարփակ ձևով և իր էությանը համապատասխան:



ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԲՅՈՒՋԵՏՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ
ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում պետական և տեղական ինքնակառավարման բյուջեում ծախսերի ավելացում կամ եկամուտների նվազեցում չի նախատեսվում: